# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Յունիսի 3-ին, կիրակի.- Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը քարոզ խոսեց՝ «Էին ամենեքեան միաբան ի միասին» (Գործք Բ 1) բնաբանով:

*Յունիսի 10-ին, կիրակի.- Ա. կիրակի զկնի Հոգեգալստեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թորգոմ աբղ. Տոնիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Երթ, որդին քո կենդանի է» (Հովհ. Դ 50) բնաբանով:

*Յունիսի 16-ին, շաբաթ.- Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ աբղ. Շաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Հակոբ եպս. Գլըընճյանը:

Նույն օրը, ժամը 24-ին, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

*Յունիսի 17-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Հոգեգալստեան: Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Հունիսի 24-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Հոգեգալստեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Հունիսի 30-ին, շաբաթ.- Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգոր աբղ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Հուլիսի 1-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Հոգեգալստեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մկրտիչ աբղ. Պռոշյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Հուլիսի 8-ին, կիրակի.- Ե. կիրակի զկնի Հոգեգալստեան: Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մուշեղ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը քարոզ խոսեց՝ «Մարդ է որ գործէ զերկիր» բնաբանով:

Պատարագից հետո երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրմի վրա հոգեհանգստյան պաշտոն կատարվեց, որին հանդիսապետում էր Վեհափառ Հայրապետը:

*Հուլիսի 15-ին, կիրակի.- Զ. կիրակի զկնի Հոգեգալստեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս.. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Խոր Վիրապ երիտասարդական ուխտագնացության առթիվ քարոզ խոսեց:

*Հուլիսի 22-ին, կիրակի.- ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը: Հընթացս Ս. Պատարագի տեղի ունեցավ սարկավագա-

կան ձեռնադրություն, որից հետո պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Հուլիսի 29-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: Հընթացս Ս. Պատարագի տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն, որից հետո պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: